Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Երաժշտության դաստիարակ՝ 1,5 դրույքային միավոր,

2. Մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ՝ 1 դրույքային միավոր:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջներն են՝

1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց).

2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Երաժշտություն» առարկան:

Մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի որակավորման պահանջներն են՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դիմող քաղաքացիները թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից 17:00:

Մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի մրցույթը կկայանա 2026 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 11:00, Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում (հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1): Երաժշտության դաստիարակի թափուր հաստիքի մրցույթը կկայանա դեկտեմբերի 25-ին ժամը 13:00, Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում (հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/):

Տեղեկությունների համար զանգահարել (374)95646961 հեռախոսահամարով, հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1, էլ. հասցե՝ tiv2shushan@mail.ru: